# ԱՅՈ՛, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԸ ՋՈՒՐ ՉԷ...

(Սկիզբը 3-րդ էջում)



Ռուդոլֆ Խաչատրյան— «ԷԼԻ՛Ր, ՈՒՄ ԿՅԱՆՔԸ ԱՆԻԾԵԼ Է...»

# ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Փետրվարի 18-ին Երևանի նկարչի տանը բացվեց Հայաստանի երիտասարդ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես, որ կազմակերպել են Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրությունը, ՀԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեն և Հայաստանի Կերպարվեստագետների միությունը: Ցուցահանդեսը բացեց ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Մ. Դավթյանը: Ներկայացված գործերի մասին բնութագրական խոսք ասաց Կերպարվեստագետների միության պատասխանատու քարտուղար Գ. Զուբարյանը:

Ուրախության ցուցադրություն. այս է առաջին տպավորությունը, որ ստանում է այցելուն, երբ նայում է նկարներին, իսկ այդ ուրախությունը արտահայտվում է և՛ թեմաներում, և՛ նյութի մատուցման ձևերում: Այդ ուրախությունը արտահայտվում է և՛ յուղաներկերով ու ջրաներկերով, և՛ տուշով ու ածուխով, և՛ քանդակներում:

Ցուցահանդեսին ներկայացած նկարիչներից շատերը արդեն վաղուց են իրենց վրա ուշադրություն հրավիրում, կան անուններ, որոնք առաջին անգամ են ներկայանում լայն հասարակայնությանը, ոմանք դեռ Գեղարվեստական ինստիտուտի ուսանողներ են: Մի քանիսի գործերում դեռևս ստեղծագործողի սեփական դեմքը որոշակիորեն չի ընդգծված, բայց հիմնականում ցուցահանդեսում ներկայացված գործերը վկայում են ստեղծագործողների անհատականության, կյանքը ժամանակակցի աչքերով տեսնելու կարողության և խիզախելու ընդունակության մասին:

Ներկայացված կտավների վրա այցելուն տեսնում է հայրենի բնությունը՝ մերթ որպես լերկ լեռ ու ժայռ, մերթ որպես վառվռուն ծաղիկներով արոտ, տեսնում է այսօրվա կառույցները, քաղաքները, և այդ բոլորի վրա մարդուն, որ վերափոխում է բնությունը, լեռներ է ճեղքում, հասարակարգեր փոխում (Ռ. Խաչատրյան— «Էլի՜ր, ում կյանքը անիծել է...»), մայրական քնքշությամբ երեխային է սիրում, ինչ-որ երազի ժպտում է, աշակերտական նստարանին նստած դեպի վաղվա կյանք է գնում:

Ցուցահանդեսում ներկայացված ստեղծագործությունները մեծ մասամբ պահի, տրամադրության վերարտադրություններ են, շոյող են, ուրախացնող, քնքուշ հույզեր արթնացնող. դժվար է հանդիպել այնպիսի գործի՝ լինի բնանկար թե դիմանկար, որ փորփրի մարդու ներաշխարհը: Ճիշտ է, այսօրվա մարդն է պատկերված բոլոր կտավներում էլ, բայց պատկերված է մեծ մասի կողմից իր մի կողմով՝ ժպտացող կողմով: Չի պատկերված իր ուժով, կռվով, կյանքի պայքարում հաղթելու վճռականությամբ:

Այցելուների ուշադրությանը հատկապես շատ է արժանանում Ա. Հարությունյանի «Երիտասարդություն» քանդակը, որտեղ պատկերված է բարձրացող, հեռուները ձգտող, խոհուն, ջինջ ու առողջ երիտասարդությունը:

Կոմպոզիցիոն գործերից, որոնք համեմատաբար քիչ են, աչքի է ընկնում Ռ. Խաչատրյանի «Էլի՜ր, ում կյանքը անիծել է...» կտավը: Վճռական պայքարի, կենաց ու մահու կռվի ելած մի դասակարգի երկաթյա կամքը, ատելությունը, բողոքը, ցասումն է դրոշմված կերպարների դեմքերին: Գույները, որոնց մեջ գորշը բավականին մեծ տեղ է գրավում, լրացնում են դիմագծերի արտահայտությունները: Այս նկարով էլ սկսվում ու վերջանում են մռայլ տրամադրությունը, գորշ գույները: Ցուցահանդեսի դահլիճներում տիրականորեն լցվել է ուրախ տրամադրությունը, և այցելուները այդ տրամադրությամբ էլ համակվում են:

Այս ցուցահանդեսում ներկայացված գործերից շատերը բարձր գնահատականի կարժանանան և Մոսկվայի Պուշկինի անվան Պետական կերպարվեստի թանգարանում, որտեղ մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպվելու է Սովետական Միության երիտասարդ կերպարվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդեսը:

ՇՈՂԻԿ ՍԱՖՅԱՆ

# ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԵՐԳԵՐ

### ԱՅՍՕՐ ՍԱԼՅՈՒՏ ԿԼԻՆԻ...

### ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԵՍ ԲԱՐԱԿ ԱՌՈՒ...

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ինչ որ է. շնորհակալություն քեզ: Այսօր նա ինձ շատ զվարճացրեց:



Հովհ. Մինասյան— «ԶԱՐԹՈՆՔ» («Ծաղկե նկարներ» շարքից):

# «ԻՄ ՀԱՄԼԵՏԸ»



Խ. Դ.

Ի տ. խմբագրի՝ Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ
Խմբագրական կոլեգիա.— ԱՏ. ԶՈՐՅԱՆ, Դ. ՀՈՎՆԱՆ, ԷԴ. ՋՐԲԱՇՅԱՆ, Ա. ՍԱՀԻՆՅԱՆ, Մ. ՍԱՐԳՍՅԱՆ, Գ. ՍԱՐՅԱՆ, Գ. ՍԵՎՈՒՆՑ, Հ. ՖԻԼԻՖՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ
23 փետրվարի 1962 թ., 3-րդ էջ



Ռուդոլֆ Խաչատրյան— «ԵԼԻ՛Ր, ՈՒՄ ԿՅԱՆՔԸ ԱՆԻԾԵԼ Է...»

# ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կոմպոզիցիոն գործերից, որոնք համեմատաբար քիչ են, աչքի է ընկնում Ռ. Խաչատրյանի «Ելի՛ր, ում կյանքը անիծել է...» կտավը: Վճռական պայքարի, կենաց ու մահու կռվի ելած մի դասակարգի երկաթյա կամքը, ատելությունը, բողոքը, ցասումն է դրոշմված կերպարների դեմքերին: Գույները, որոնց մեջ գորշը բավականին մեծ տեղ է գրավում, լրացնում են դիմագծերի արտահայտությունները: Այս նկարով էլ սկսվում ու վերջանում են մռայլ տրամադրությունը, գորշ գույները: